ընդ միմեանս. և յետոյ լսեցին ի բանէս և ոչ եկին:

Ժէ–ին Բուն Բարեկենդան. և օլօֆէն Տաճկաց ել:

Բշի օր (18 Փէտր.) *կէս աւուրս երթայ վէզիրն ի նէրս եւ ամենայն մեծամեծքն եւ տաէ թագաւորին թէ Նեղացայ յօլօֆէն, եւ մին օլօֆէն եւս ահա գայ. դրամ չկայ, ես ի՞նչ առնեմ: Եւ թագաւորն առեալ զկնիքն եւ տայ ի ձեռս դեսպանի առ Տէլլի Հուսէին փաշան՝ վէզիրութեան, եւ եդ ղայմախամ զՋուռնազանն, որ էր ղափուտան նախ. և եղև տրտում մեծ մեզ զի կիսկատար եղև բանն:*

Եւ Գշի (19 Փէտր.) *ղաէֆտէրտարն փոխեցին եւ եդին ի տեղի նորա զքէհեայ Մուրատ փաշային, որ ասի Ղարակեօզ:*

Ուրբաթ օրս (22 Փէտր.)(*) *ի խանութ նստեալ կայաք, ի կէս աւուրս տեսաք զի աղաղակ մեծ բարձաւ, զի արք որք յերթ և յեկ էին, նա՛ յայսմ ժամու ընթանային*[1]) *յայս կոյս և յայն կոյս, ոչ որպէս Իփշիրին եղև, այլ էանց գայն. բայց մեք ըստ չափոյ մեր ծրեցուք: Եւ ամենեքեան ի քաղաքս որչափ խանութպանք որ կային՝ աճապարելով զխանութս իւրեանց փակէին, զի ոչ գիտէին զելս իրացն: Նոյնպէս եւ ի դող ելեալ մեր՝ փակեցաք զխանութս մեր շտապով եւ գնացեալ ի տուն՝ արգիլեցաք: Եւ ապա գայս իմացեալ սակաւ, որ կէս աւուրս ի ճամիքն և ի մըզկիթան ոչ են արարեալ նամազ եւ ժողովեալ Բ ծառայք թագաւորին և այլ նւաստագոյնքն. գլուխ ծառայք յենկիչէրի եւ իսպահի էին եւ այլն թօփչի եւ ճէպէճի՝ գնացեալ ի յէթմէյտանն, մի խորհուրդ եդեալ, դաշինս եւ ուխտ եդեալ առ միմեանս. Նոյն-*

1) *ընդանային.*

(*) **Լուս. օտար գրչէ.** *առաջի շաբաթու աւագ պահոցս:*